ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2025 թվականի № -Ա

ԲԱՑԱՌԱՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի №392-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46.1-ին կետը, №3 հավելվածի 5-րդ կետը և հաշվի առնելով «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի սեպտեմբերի 30-ի, հոկտեմբերի 15-ի և «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հոկտեմբերի 15-ի գրությունները ՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 15-ի «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերությանը «Ասկե» արևային էլեկտրակայանում բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №392-Ա որոշումը՝ այդ որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ№0752 լիցենզիայով ամրագրված՝ «Ասկե» արևային էլեկտրակայանի կառուցման պարտավորության կատարման հիմքով:

2. Սահմանել, որ Ընկերությունը «Ասկե» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիան (հզորությունը) կարող է արտադրել բացառապես սեփական կարիքների համար:

3. «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2023 թվականի հուլիսի 6-ի №652-6629 գրությամբ ներկայացված ԲԲԵՆ23/419-01 երաշխիքի համաձայն Հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 23-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2025թ.